

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 66-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Արտակ Գալստյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Արտակ Գալստյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի սեպտեմբերի 22-ին , որով Դիմողը խնդրել է.

«1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՕ-248 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ իմ նկատմամբ կիրառված խմբագրությամբ 66-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի «փաստաբանին վճարված գումարները» դրույթը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված այն մեկնաբանությամբ, որով արդարացված անձի հատուցման իրավունքը պայմանավորվում է փաստաբանին

գումարը նախապես փաստացի վճարված լինելով, և արդեն մատուցված իրավաբանական ծառայությունների դիմաց առաջացած իրական ու իրավաբանորեն պարտադիր վճարային պարտավորությունը հատուցման շրջանակից բացառվում է միայն չմարված լինելու պատճառով, ճանաչել Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 62-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նշված իրավունքները 64-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 2-րդ կետի, 75-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածների հետ համակցված մեկնաբանությամբ»:

2. Դիմողը, ներկայացնելով թիվ ԵԴ/19662/02/22 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը, մասնավորապես, նշում է, որ պետության պատասխանատվության սահմանադրական իմաստը չի կարող հանգել նրան, որ անձը նախ իր միջոցներով վճարի իրավունքի պաշտպանության հետևանքով առաջացած պարտքը և միայն դրանից հետո ձեռք բերի դրա հատուցման հնարավորություն: Դիմողը պնդում է, որ այդ նախապայմանը փոխում է իրավունքի իրականացման տրամաբանությունը. տուժողից պահանջվում է նախապես սեփական միջոցներով կրել այն բեռը, որի վերականգնման համար նախատեսված է հատուցման իրավունքը:

Դիմողը գտնում է, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետին տրված՝ վիճարկվող մեկնաբանությամբ նույն պարտավորությունը ճանաչվում է գոյություն ունեցող՝ փաստաբանի առջև վստահորդի պարտքի իմաստով, սակայն սկզբունքորեն անտեսվում է պետության նկատմամբ հատուցման իրավունքի իմաստով: Ըստ Դիմողի՝ նման բացառման միակ հիմքը վճարման դեռևս կատարված չլինելն է, որպիսի դեպքում իրավական բեռի գոյության հարցը փոխարինվում է դրա կատարման մասին հարցով, և պարտավորության իրավական բնույթը կորցնում է իր նշանակությունը:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող դրույթը՝ դրան տրված համապատասխան մեկնաբանությամբ, թույլ է տվել գործը քննել, սակայն բացառել է չմարված

պարտավորության իրավական պաշտպանությունը՝ միայն դրա չկատարված լինելու հիմքով: Հավելելով՝ Դիմողը գտնում է, որ այդ պատճառով Սահմանադրության 61-րդ հոդվածն այստեղ գործադրվում է 62-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի և 75-րդ հոդվածով սահմանված պահանջի հետ համակցված: Ըստ Դիմողի՝ իրավունքը պաշտպանելու ձևական հնարավորություն տալը բավարար չէ, եթե հենց կիրառվող նորմն է անհամաչափորեն արգելափակում դրա իրացումը:

Վկայակոչելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 779-րդ հոդվածի 1-ին մասը՝ Դիմողը նշում է, որ օրենքով թույլատրելի ֆինանսավորման համապատասխան եղանակն ինքնին չի կարող արդարացվածին զրկել համապատասխան հատուցման իրավունքից, հակառակ դեպքում՝ ընտրված պաշտպանի հետ հետվճարի շուրջ համաձայնությունը պաշտպանության հասանելիությունն ապահովելու միջոցից վերածվում է իրավական անբարենպաստ հետևանքի հիմքի:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ վճարման հանգամանքով չի բացառվում այն անձի իրավունքը, որի պաշտպանության դիմաց առաջացած պարտավորությունն արդեն իսկ մարված է, իսկ այն անձի, որի պաշտպանության դիմաց առաջացած պարտավորությունը դեռևս մարված չէ, նույն բնույթի պարտքը հատուցման շրջանակից դուրս է մնում միայն չմարված լինելու պատճառով: Վերոգրյալ տարբերակումը, ըստ Դիմողի, պայմանավորվում է պարտավորության կատարման պահով և պաշտպանության ֆինանսավորման եղանակով, որպիսի հանգամանքներն ինքնին չեն բացահայտում այնպիսի տարբերություն, որը կարող է արդարացնել իրավունքի ամբողջական բացառումը:

Դիմողի պնդմամբ՝ օրենսդիրը կարող է իրավական տարբեր իրավիճակներ տարակերպ կարգավորել, սակայն համադրելի խմբերի միջև տարբերակումը պահանջում է նպատակի հետ կապված և համաչափ արդարացում: Հավելելով՝ Դիմողը գտնում է, որ միայն «վճարված» բառի տառացի իմաստի վրա հիմնվելը

կրկնում է տարբերակումը՝ առանց դրա սահմանադրական անհրաժեշտությունն ապացուցելու:

Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 75 և 78-րդ հոդվածների համակցված իմաստով իրավունքի իրացման կառուցակարգը պետք է իրական պարտավորությունը չարաշահումից տարբերակելու հնարավորություն տա: Հավելելով՝ Դիմողը պնդում է, որ նման տարբերակումը բոլոր չմարված պարտքերը բացառող կանխավարկածով փոխարինելը համաչափ միջոց չէ:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը՝ իր նկատմամբ կիրառված՝ բացառող մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 62-րդ հոդվածի 1-ին մասին՝ 64-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 2-րդ կետի, 75, 78 և 81-րդ հոդվածների հետ համակցված մեկնաբանությամբ:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.**

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական*

*պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրության հիշյալ դրույթն ամրագրված է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

*գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրված է. «(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (…), ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Սահմանադրական դատարանն ընգծում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական**

հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի՝ տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (սույն պարագայում՝ նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատման հարցեր:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) **սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց:** Դիմողը, մասնավորապես, նշել է. *«Վիճարկվող մեկնաբանությամբ նույն պարտավորությունը ճանաչվում է գոյություն ունեցող՝ փաստաբանի առջև վստահորդի պարտքի իմաստով, բայց սկզբունքորեն անտեսվում է՝ պետության նկատմամբ հատուցման իրավունքի իմաստով: Այդ բացառման միակ հիմքը վճարումն արդեն կատարված չլինելն է: Այդպես իրավական բեռի գոյության հարցը փոխարինվում է դրա կատարման մասին հարցով, և պարտավորության իրավական բնույթը կորցնում է նշանակությունը»:*

Դիմողը նաև նշել է. *«Իմ գործով դատարանների հաստատած պայմանը քրեական գործի վերջնական ավարտից հետո մեկ տարվա ընթացքում վճարելն է: Դա պետությունից հատուցում ստանալու դեպքում միայն պարտք առաջանալու պայման չէ: Պարտավորությունն ունի պայմանագրային հիմք, իսկ դրա կատարումը՝ համաձայնեցված ժամկետ:*

Օրենքով թույլատրելի ֆինանսավորման այդ եղանակն ինքնին չի կարող արդարացվածին զրկել համապատասխան հատուցման իրավունքից: Հակառակ դեպքում ընտրված պաշտպանի հետ հետվճարի շուրջ համաձայնությունը

պաշտպանության հասանելիությունն ապահովելու միջոցից վերածվում է իրավական անբարենպաստ հետևանքի հիմքի»:

Նկատի ունենալով Դիմողի կողմից ներկայացված նաև այլ դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Դիմողն իր անհամաձայնությունն է հայտնում **թիվ ԵԴ/19662/02/22 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակության առնչությամբ:** Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) **հակասահմանադրականության վերաբերյալ որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացրել,** իսկ որպես փաստարկ ներկայացված դիրքորոշումներն առավելապես վերաբերում են վերոնշյալ քաղաքացիական գործով **ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով բարձրացրած հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ թիվ ԵԴ/19662/02/22 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Հետևաբար՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Արտակ Գալստյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ **Է. ՇԱԹԻՐՅԱՆ**

30 հոկտեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-235